

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՅ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է բաց ընթացակարգի հանձնաժողովի
2016 թվականի ապրիլի 08-ի թիվ «2» որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/2

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 28 հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգ:

Բաց ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ճանապարհների շինարարական աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի բաց ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Բաց ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 41-րդ օրը ժամը 16:00-ն: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

Գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում, հայտերը հայերենից բացի կարող են ներկայացվել նաև ռուսերեն և /կամ/ անգլերեն լեզուներով:

Ռուսերենով կամ անգլերենով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է ռուսերենով կամ անգլերենով հրավերի տրամադրումն այդպիսի պահանջ ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armepps (www.armepps.am կայքի) համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 41-րդ օրվա ժամը 16:00-ն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Սույն գնման գործընթացը իրականացվելու է էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, 2016 թվականի մայիսի 19-ին, ժամը 16:00-ին:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն հրավերի 1-ին մասի 12-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների (ինչպես նաև այլ պահանջների մասով)՝ սույն ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին

համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները հայտով պետք է պատվիրատուին ներկայացնեն սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Անդրանիկ Մովսեսյանին:

Հեռախոս՝ (+37410) 59 00 20:

Էլ.փոստ՝ amovsisyan@transportpiu.am:

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն:

ОБЪЯВЛЕНИЕ ОБ ОТКРЫТОЙ ПРОЦЕДУРЕ

Данный текст утвержден решением

оценивающей комиссии открытой процедуры закупок N 8 от 06 апреля, 2016г.

и публикуется согласно 24 статье закона РА “О закупках”.

Код открытой процедуры ОРТП-ОПРП-2016/2

Заказчик –Министерства транспорта и связи РА, которая находится по адресу Г. Ереван, Налбандяна 28, объявляет открытую процедуру.

Победившему участнику открытой процедуры в установленном порядке будет предложено подписать контракт об осуществлении дорожно-строительных работ (далее “контракт”).

Согласно статье 6 закона РА “О закупках”, заявки открытой процедуры могут представлять все лица вне зависимости от того, являются ли они иностранными физическими лицами, организацией или лицом, не имеющим гражданства имеют равные права по принятию участия в открытой процедуре.

В открытой процедуре не могут участвовать лица, которые в судебном порядке объявились банкротом, имеют просроченные долги в по линии налоговых и обязательных социальных выплат РА, представитель исполнительного органа был осужден за преступления в экономической деятельности или государственной службы предыдущие три года ко времени заполнения заявления, кроме тех случаев, когда осуждение по закону было аннулировано или отменено, которые включены в списке лиц, не имеющие право участвовать в процессе закупок.

Участник должен иметь определенные по контракту для исполнение обязательств требуемое приглашением: совместимость профессиональной деятельности по контракту определенной деятельностью, профессиональный опыт, технические ресурсы, финансовые ресурсы, трудовые ресурсы.

Победивший участник определяется из числа участников, заявки которых были оценены удовлетворительно, давая предпочтение участнику, представленному минимальную цену, с которым и заключается договор.

Для получения приглашения открытой процедуры в документальной форме необходимо обратиться к заказчику до 41-ого дня 16:00ч, считая со дня опубликования данного объявления срока завершения представления заявок. Для получения приглашения открытой процедуры в документальной форме необходимо Заказчику предоставить письменное заявление. Заказчик обязуется предоставить лицу, который представил заказчику такое требование в день получения данного заявления.

Если базовая единица закупок превышает в пятидесятикратном размере, помимо заявок, составленных на армянском языке, можно представить заявки также на русском и/или английском языках.

Для того, чтобы получить приглашение на русском или английском языке, необходимо представить письменное заявление Клиенту. Клиент обязан предоставить приглашение на русском или английском языке в течение десяти рабочих дней со дня получения соответствующего заявления.

В случае требования приглашения в электронной форме Заказчик обязуется предоставить приглашение по электронной почте в течение рабочего дня после получения соответствующего заявления.

Неполучение приглашения согласно порядку, установленному этим приглашением, не ограничивает право участника принять участие в процедуре.

Заявки открытой процедуры необходимо представить в электронной форме на вебстранице www.armeps.am до установленного срока. Данная процедура закупок осуществиться в электронной форме через www.armeps.am (в дальнейшем вебстраница). Открытие заявок состоится в порядке, установленном законом РА “О закупках”, до 41-ого дня 16:00ч, считая со дня опубликования данного объявления. Заявки необходимо представить на армянском языке.

Данная процедура закупок будет осуществлена в электронной форме посредством вебстраницы www.armeps.am.

Открытие предложения (заявок) участников будет осуществляться в электронной форме посредством вебстраницы www.armeps.am, 19-ого мая 2016г. в 16:00.

Жалобы относительно открытой процедуры предоставляются Центру Помощи Закупок ГНО по адресу г.Ереван, Комитаса 54/Б. Обжалование осуществляется порядком, установленным первой части 12-го раздела этого приглашения.

Для оценки соответствия квалификационных данных участников установленным конкурсным приглашением условиям, участники должны представить заказчику документы, предусмотренные конкурсным приглашением.

Для получения дополнительной информации относительно данного приглашения можете обратиться г-ну Андранику Мовсисяну. Тел: (+37410) 590 020, эл.почта: amovsisyan@transportpiu.am

Заказчик: Министерства транспорта и связи РА.

ANNOUNCEMENT

On Open procedure

The text of this announcement is approved by the Decision N 2 of Evaluation Committee dated 08 April, 2016 and is being published according to Article 24 of the Law of the Republic of Armenia "On Procurements".

The code of the simplified procedure: TPIU-OPWP-2016/2

The Client, Ministry of Transport and Communication of the Republic of Armenia, located at 28 Nalbandyan street, Yerevan, RA is announcing the open procedure.

The participant declared as the winner in the open procedure according to the defined order will be suggested to sign a contract on implementation of the road construction works (hereinafter referred to as contract).

According to the terms of Article 6 of the RA Law "On Procurements", all persons or entities, irrespective of being a foreigner, a foreign entity or a stateless person, may submit bids for the open procedure.

The persons who were announced bankrupt, have overdue debts of social and tax payments of RA, has been convicted of economic activity or public services previous three years by the time of filling the application, except those cases when the conviction has been defined by the law or is canceled, which are included in the procurement process without the right to participate in the list of participants.

The participant must have obligations required by the invitation of the professional activities of contract, professional experience, technical resources, financial resources, labor resources.

The successful participant is determined from the participant's submitted responsive evaluated bids. The preference will be given to and a contract will be signed with participant who submitted financial proposal in minimal price.

To receive the invitation of this procedure it is required to apply to the Client on the 41-st day as from the day of publication of the announcement, at 16:00. To receive an invitation in a hard copy it is necessary to send a written request to the Client. The Client is obliged to provide the hard copy.

If the procurement basic unit exceeds fifty-fold, the bids besides drowning up in Armenian should be presented also in the Russian and/or English languages.

In order to receive an invitation in Russian or English, it is required to submit a written request to the Client. The Client is obliged to provide the invitation in Russian or English within ten working days following the date of receipt of such a request.

In case of getting a request for providing the invitation electronically, the Client shall ensure provision of invitation via electronic email within the working day following the day of getting such a request.

Not getting an invitation in the order prescribed by this invitation shall not restrict the right of the participant to participate in this procedure. The bids for the open procedure should be submitted electronically through www.armeps.am website on the 41st day as from the day of publication of the announcement, at 16:00 and should be presented in Armenian.

This given procurement procedure will be carried out electronically via www.armeps.am website.

The bid opening will be electronically via www.armeps.am website on 19 May, 2016 at 16:00.

The complaints regarding the open procedure are presented to Procurement Assistance Centre at the following address Komitas 54/b. The appeal is conducted by the order defined by the 1st part of section 12 of the given invitation.

Participants should present to the Client all documentation required by the open procedure invitation to bid to evaluate their right to participate in bidding and compliance of qualification data of the participants with the conditions defined by the open procedure invitation to bid.

For further information regarding this announcement you can apply to Mr. Andranik Movsisyan.

Tel: (+37410) 590 020

Email: amovsisyan@transportpiu.am

Client: Ministry of Transport and Communication of the Republic of Armenia

Հաստատված է
ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/2 ծածկագրով
բաց ընթացակարգի հանձնաժողովի
2016թ. ապրիլի 08-ի թիվ 3 որոշմամբ

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Վ Ե Ր

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ Մ-16, Մ-4-ՈՍԿԵՊԱՐ-ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ-Մ-6 ԿՄ 31+000 ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՆՑԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, Մ-17, ԿԱՊԱՆ-ԾԱՎ-ՇՎԱՆԻՁՈՐ-ՄԵՂՐԻ-Մ-2 ԿՄ 17+000 ԵՎ ԿՄ 28+000 ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, Հ-42, Մ-2-ԱՐԵՆԻ-ԽԱՉԻԿ-ԳՆԻՇԻԿ ԿՄ 1+500, ԿՄ 5+600 ԵՎ ԿՄ 11+200 ԵՐԵՔ ՈԼՈՐԱՆՆԵՐԻ ԼԱՅՆԱՅՄԱՆ, Տ-8-81, Մ-12-ԽՆԱԾԱԽ-ՎԱՂԱՏՈՒՐ-Տ-8-13 ԿՄ 2+800 ՀԱՏՎԱԾԻ ԵՐԿԱԹԲԵՏՈՆՅԱ ԽՈՂՈՎԱԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ, ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ 800 Մ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, Ա/Ճ Մ-2-ԵՐԵՎԱՆ-ԵՐԱՍԽ-ԳՈՐԻՍ-ՄԵՂՐԻ-ԻՐԱՆԻ ՍԱՀՄԱՆ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔՈՎ ԱՆՑՆՈՂ (ՍՅՈՒՆԻՔԻ ՓՈՂՈՑ) ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԵՆԱՊԱՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, Մ-11, ՄԱՐՏՈՒՆԻ-ՎԱՐԴԵՆԻՍ-ԼՂՀ ՍԱՀՄԱՆ ԿՄ 23+700-ԿՄ 23+800 ՓԼՈՒԶՎԱԾ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳԱԲԻՈՆԱՅԻՆ ՀԵՆԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, Մ-16, Մ-4-ՈՍԿԵՊԱՐ-ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ-Մ-6 ԿՄ 37+000 ՓԼՈՒԶՎԱԾ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, Հ-28, ԶՐԱՌԱՏ-ՄԵՂՐԱՁՈՐ-ՀԱՆՔԱՎԱՆ ԿՄ 26+000 ՀՈՂԱՅԻՆ ՊԱՍՏԱՌԻ ՎԵՐԻՆ ՇԵՊԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՀՀ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԶԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԲԱՅ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հարգելի մասնակից

- նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

Միաժամանակ խնդրում ենք գնման առարկան զննել վերջինիս գտնվելու վայրում, ձեռք բերել անհրաժեշտ տեղեկություններ, որոնք վերաբերում են հայտի նախապատրաստմանը և պայմանագրի կնքմանը:

- հայտերը ներբեռնելիս և ներկայացնելիս պետք է առաջնորդվել Համակարգում (www.armeps.am կայքում (կայքի վերևի ծախ անկյունում)) տեղադրված ժամացույցով,

- հայտ կազմելիս անհրաժեշտ է ուշադրությամբ ծանոթանալ www.armeps.am կայքի «Նորություններ» և «Հաճախ տրվող հարցեր» բաժիններում պարբերաբար տեղադրվող և թարմացվող նյութերին,

- եթե ընթացակարգը չափաբաժիններով է, ապա առաջին քայլով պետք է Համակարգի (www.armeps.am) կայքի «Հայտ» դաշտում նախապես նշել այն չափաբաժինը կամ չափաբաժինները, որոնց համար մասնակիցը հայտ է ներկայացնում, որից հետո նոր միայն լրացնել մնացած դաշտերը, այլապես հայտի փաստաթղթերը չեն բացվի գնահատման ժամանակ, վերոգրյալ մասը մանրամասն ներկայացված է www.armeps.am կայքի «Հաճախ տրվող հարցեր» բաժնում,

- էլեկտրոնային գնումների Armeps համակարգի հետ հարցեր և խնդիրներ առաջանալիս դիմել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետք նաև՝ կենտրոն)՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով (հեռախոս՝ (0037410) 28-93-20):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ Մ-16, Մ-4ՈՍԿԵՊԱՐ-ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ-Մ-6 ԿՄ 31+000 ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՆՑԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, Մ-17, ԿԱՊԱՆ-ԾԱՎ-ՇՎԱՆԻՋՈՐ-ՄԵՂՐԻ-Մ-2 ԿՄ 17+000 ԵՎ ԿՄ 28+000 ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, Հ-42, Մ-2-ԱՐԵՆԻ-ԽԱԶԻԿ-ԳՆԻՇԻԿ ԿՄ 1+500, ԿՄ 5+600 ԵՎ ԿՄ 11+200 ԵՐԵՔ ՈԼՈՐԱՆՆԵՐԻ ԼԱՅՆԱՑՄԱՆ, Տ-8-81, Մ-12-ԽՆԱԾԱԽ-ՎԱՂԱՏՈՒՐ-Տ-8-13 ԿՄ 2+800 ՀԱՏՎԱԾԻ ԵՐԿԱԹԲԵՏՈՆՅԱ ԽՈՂՈՎԱԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ, ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ 800 Մ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, Ա/Ճ Մ-2-ԵՐԵՎԱՆ-ԵՐԱՍԽ-ԳՈՐԻՍ-ՄԵՂՐԻ-ԻՐԱՆԻ ՍԱՀՄԱՆ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔՈՎ ԱՆՑՆՈՂ (ՍՅՈՒՆԻՔԻ ՓՈՂՈՑ) ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԵՆԱՊԱՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, Մ-11, ՄԱՐՏՈՒՆԻ-ՎԱՐԴԵՆԻՍ-ԼՂՀ ՍԱՀՄԱՆ ԿՄ 23+700-ԿՄ 23+800 ՓԼՈՒԶՎԱԾ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳԱԲՈՆԱՅԻՆ ՀԵՆԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, Մ-16, Մ-4ՈՍԿԵՊԱՐ-ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ-Մ-6 ԿՄ 37+000 ՓԼՈՒԶՎԱԾ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, Հ-28, ԶՐԱՌԱՏ-ՄԵՂՐԱՋՈՐ-ՀԱՆՔԱՎԱՆ ԿՄ 26+000 ՀՈՂԱՅԻՆ ՊԱՏՏԱՌԻ ՎԵՐԻՆ ՇԵՊԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԶԵՌՔԵՐԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՍՈՒՅՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ

ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը

5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
6. Հայտի ապահովումը
7. Հայտերի բացումը
8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

ՄԱՍ II. ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը
4. Հայտի գնային առաջարկը
5. Հավելվածներ 1-10

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետև՝ Պատվիրատու)՝ կարիքների համար՝ Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ 31+000 սողանքային հատվածի անցանելիության ապահովման, Մ-17, Կապան-Ծավ-Շվանիձոր-Մեղրի-Մ-2 կմ 17+000 և կմ 28+000 սողանքային ճանապարհահատվածների վերականգնման, Հ-42, Մ-2-Արենի-Խաչիկ-Գնիշիկ կմ 1+500, կմ 5+600 և կմ 11+200 երեք ոլորանների լայնացման, Տ-8-81, Մ-12-Խնածախ-Վաղատուր-Տ-8-13 կմ 2+800 հատվածի երկաթբետոնյա խողովակի վերականգնման, ՀՀ Արարատի մարզի Ջրաշենի համայնքի միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վերանորոգման, ՀՀ Արարատի մարզի Արմաշի համայնքի գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատման, ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատի համայնքի 800 մ ճանապարհի ասֆալտապատման շինարարական աշխատանքների, Ա/6 Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման Գորիս քաղաքով անցնող (Սյունիքի փողոց) հատվածում հենապատի վերականգնման, Մ-11, Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման կմ 23+700-կմ 23+800 փլուզված հատվածում գաբիոնային հենապատի կառուցման, Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ 37+000 փլուզված հատվածի վերականգնման, Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան կմ 26+000 հողային պաստառի վերին շեպի վերականգնման, ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Առափնյա փողոցի ասֆալտապատման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/2» ծածկագրով անցկացվող բաց ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ), ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Ռուսերենով կամ անգլերենով հրավեր ստանալու համար Պատվիրատուին ներկայացվում է գրավոր դիմում և ռուսերենով կամ անգլերենով սույն հրավերը տրամադրելու համար պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը: Ռուսերենով կամ անգլերենով հրավեր տրամադրելու համար գանձվող գումարի չափը չի կարող գերազանցել հրավերի թարգմանության, տպագրման և առաքման համար կատարվող ծախսերի չափը: Այս դեպքում Պատվիրատուն ապահովում է հրավերի տրամադրումն այդպիսի պահանջ ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում: Պատվիրատուի կողմից ռուսերենով կամ անգլերենով տրամադրված հրավերն ունի նույն իրավական ուժը, ինչ որ հայերեն հրավերը: Ռուսերենով կամ անգլերենով հրավերի և հայերեն հրավերի տարբերության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Մասնակցի: Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ amovsisyan@transportpiu.am:

ՄԱՍ I

1. ԳԵՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար՝ Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ 31+000 սողանքային հատվածի անցանելիության ապահովման, Մ-17, Կապան-Ծավ-Շվանիձոր-Մեղրի-Մ-2 կմ 17+000 և կմ 28+000 սողանքային ճանապարհահատվածների վերականգնման, Հ-42, Մ-2-Արենի-Խաչիկ-Գնիշիկ կմ 1+500, կմ 5+600 և կմ 11+200 երեք ոլորանների լայնացման, S-8-81, Մ-12-Խնածախ-Վաղատուր-S-8-13 կմ 2+800 հատվածի երկաթբետոնյա խողովակի վերականգնման, ՀՀ Արարատի մարզի Ջրաշենի համայնքի միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վերանորոգման, ՀՀ Արարատի մարզի Արմաշի համայնքի գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատման, ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատի համայնքի 800 մ ճանապարհի ասֆալտապատման շինարարական աշխատանքների, Ա/ճ Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման Գորիս քաղաքով անցնող (Սյունիքի փողոց) հատվածում հենապատի վերականգնման, Մ-11, Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման կմ 23+700-կմ 23+800 փլուզված հատվածում գաբիոնային հենապատի կառուցման, Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ 37+000 փլուզված հատվածի վերականգնման, Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան կմ 26+000 հողային պաստառի վերին շեպի վերականգնման, ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Առափնյա փողոցի ասֆալտապատման շինարարական աշխատանքների ձեռքբերումը, որոնք խմբավորված են «12» չափաբաժինների՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ 31+000 սողանքային հատվածի անցանելիության ապահովման աշխատանքներ
2	Մ-17, Կապան-Ծավ-Շվանիձոր-Մեղրի-Մ-2 կմ 17+000 և կմ 28+000 սողանքային ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքներ
3	Հ-42, Մ-2-Արենի-Խաչիկ-Գնիշիկ կմ 1+500, կմ 5+600 և կմ 11+200 երեք ոլորանների լայնացման աշխատանքներ
4	S-8-81, Մ-12-Խնածախ-Վաղատուր-S-8-13 կմ 2+800 հատվածի երկաթբետոնյա խողովակի վերականգնման աշխատանքներ
5	ՀՀ Արարատի մարզի Ջրաշենի համայնքի միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վերանորոգման աշխատանքներ
6	ՀՀ Արարատի մարզի Արմաշի համայնքի գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ
7	ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատի համայնքի 800 մ ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ
8	Ա/ճ Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման Գորիս քաղաքով անցնող (Սյունիքի փողոց) հատվածում հենապատի վերականգնման աշխատանքներ
9	Մ-11, Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման կմ 23+700-կմ 23+800 փլուզված հատվածում գաբիոնային հենապատի կառուցման աշխատանքներ
10	Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ 37+000 փլուզված հատվածի վերականգնման աշխատանքներ
11	Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան կմ 26+000 հողային պաստառի վերին շեպի վերականգնման աշխատանքներ
12	ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Առափնյա փողոցի ասֆալտապատման աշխատանքներ

Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ 31+000 սողանքային հատվածի անցանելիության ապահովման, Մ-17, Կապան-Ծավ-Շվանիձոր-Մեղրի-Մ-2 կմ 17+000 և կմ 28+000 սողանքային ճանապարհահատվածների վերականգնման, Հ-42, Մ-2-Արենի-Խաչիկ-Գնիշիկ կմ 1+500, կմ 5+600 և կմ 11+200 երեք ոլորանների լայնացման, S-8-81, Մ-12-Խնածախ-Վաղատուր-S-8-13 կմ 2+800 հատվածի երկաթբետոնյա խողովակի վերականգնման, ՀՀ Արարատի մարզի Ջրաշենի համայնքի միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վերանորոգման, ՀՀ Արարատի մարզի Արմաշի համայնքի գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատման, ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատի համայնքի 800 մ ճանապարհի ասֆալտապատման շինարարական աշխատանքների, Ա/ճ Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման Գորիս քաղաքով անցնող (Սյունիքի փողոց) հատվածում հենապատի վերականգնման, Մ-11, Մարտունի-

Վարդենիս-ԼՂՀ սահման կմ 23+700-կմ 23+800 փլուզված հատվածում գաբիոնային հենապատի կառուցման, Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ 37+000 փլուզված հատվածի վերականգնման, Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան կմ 26+000 հողային պաստառի վերին շեպի վերականգնման, ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Առափնյա փողոցի ասֆալտապատման շինարարական աշխատանքների նախագծային փաստաթղթերը¹, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.

ըստ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի՝

<i>Չափաբաժինների համարները</i>	<i>Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).</i>
<i>1</i>	<i>2</i>
1-12	<i>Տրանսպորտային</i>

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, ՝

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում Մասնակցի՝

- <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

¹ Աշխատանքների նախագծային փաստաթղթերը էլեկտրոնային և/կամ/ փաստաթղթային եղանակներով ստնալու նպատակով մասնակիցները կարող են դիմել Պատվիրատուին, որոնք կտրամադրվեն դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում՝ 1-12 չափաբաժինների համար՝ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիայի շրջանակներում կատարված աշխատանքները, ըստ՝ տրանսպորտային ոլորտի,

2) առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Տեխնիկական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.2) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ Մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

N	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը
1			
2			

Պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներն են.

Չափաբաժին 1-ի համար՝

N	Տեխնիկական միջոցների անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	2	3	4
1	Ավտոկրունկ	Ցանկացած	1
2	Ավտոգրեյդեր	Ցանկացած	1
3	Էքսկավատոր մինչև 1մ/խ	Ցանկացած	1
4	Ինքնաթափ ավտոմեքենա	Ցանկացած	2
5	Կոմպրեսատոր	Ցանկացած	1
6	Բետոնախառնիչ	Ցանկացած	1
7	Գլրոն 12-18 տ	Ցանկացած	1
8	Գլրոն 5-10 տ	Ցանկացած	1

Չափաբաժին 2-ի համար՝

N	Տեխնիկական միջոցների անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	2	3	4
1	Ասֆալտբետոնի արտադրության գործարան	Ցանկացած	1
2	Ավտոկրունկ	Ցանկացած	1
3	Բուլդոզեր	Ցանկացած	1
4	Բետոնախառնիչ	Ցանկացած	1
5	Ավտոինքնաթափ	Ցանկացած	3
6	Ասֆալտատեղադրիչ	Ցանկացած	1
7	Կոմպրեսատոր	Ցանկացած	1
8	Զրի մեքենա	Ցանկացած	1
9	Ավտոգույրոնատոր	Ցանկացած	1
10	Պնեմոգլղոն 16-20 տ	Ցանկացած	1
11	Գլղոն 5-12տ	Ցանկացած	2
12	Ավտոգրեյդեր	Ցանկացած	1

Չափաբաժին 3-ի համար՝

N	Տեխնիկական միջոցների անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	2	3	4
	Ասֆալտբետոնի արտադրության գործարան	Ցանկացած	1
	Ավտոկրունկ	Ցանկացած	1
	Էքսկավատոր	Ցանկացած	2
	Բետոնախառնիչ	Ցանկացած	1
	Ինքնաթափ ավտոմեքենա	Ցանկացած	4
	Ասֆալտատեղադրիչ	Ցանկացած	1
	Կոմպրեսոր շարժական	Ցանկացած	1
	Ավտոցիստերն /ջրի/	Ցանկացած	1
	Ավտոգույրոնատոր	Ցանկացած	1
	Գլղոն 9տն-11տն	Ցանկացած	1
	Գլղոն 6տն-8տն	Ցանկացած	1
	Ավտոգրեյդեր	Ցանկացած	1
	Թրթռիչ	Ցանկացած	1

Չափաբաժին 4-ի համար՝

N	Տեխնիկական միջոցների անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	2	3	4
1	Բուլդոզեր	Ցանկացած	1
2	Ավտոկռունկ 10տ և ավելի	Ցանկացած	1
3	Էքսկավատոր մինչև 1մ/ս	Ցանկացած	1
4	Բետոնախառնիչ	Ցանկացած	1
5	Ավտոինքնաթափ	Ցանկացած	2
6	Ասֆալտատեղադրիչ	Ցանկացած	1
7	Կոմպրեսատոր	Ցանկացած	1
8	Ջրի մեքենա	Ցանկացած	1
9	Ավտոգուլլրոնատոր	Ցանկացած	1
10	գլղոն 5-8 տ	Ցանկացած	1
11	Պնևմոգլղոն 10-16տ	Ցանկացած	1

Չափաբաժին 5-ի համար՝

N	Տեխնիկական միջոցների անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	2	3	4
1	Էքսկավատոր	Ցանկացած	1
2	Կոմպրեսատոր	Ցանկացած	1
3	Ինքնաթափ ավտոմեքենա	Ցանկացած	1
4	Ավտոգրեյդեր	Ցանկացած	1
5	գլղոն 8-15 տ	Ցանկացած	1
6	Ավտոկռունկ	Ցանկացած	1
7	Ինքնաթափ բեռնատար մեքենա	Ցանկացած	2
8	Ավտոգուլլրոնատոր	Ցանկացած	1
9	Ջրի մեքենա	Ցանկացած	1
10	Ասֆալտբետոնի արտադրության գործարան	Ցանկացած	1
11	Ասֆալտատեղադրիչ	Ցանկացած	1

Չափաբաժին 6-ի համար՝

N	Տեխնիկական միջոցների անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	2	3	4
1	Ավտոկռունկ	10տն և ավել բեռնաբարձությամբ	1
2	Բուլդոզեր	Ցանկացած	1
3	Ինքնաթափ ավտոմեքենա	Ցանկացած	2
4	Ավտոցիստերն /ջրի/	Ցանկացած	1
5	Էքսկավատոր Մինչև 1մ/3	Ցանկացած	1
6	Ասֆալտատեղադրիչ	Ցանկացած	1
7	Ավտոգրեյդեր	Ցանկացած	1

8	Գլխին 5տն-12տն	Հարթ թմբուկավոր	1
9	Պնևմոգլոխ 12-20տ	Ցանկացած	1
10	Ավտոգուղրոնատոր	Ցանկացած	1

Չափաբաժին 7-ի համար՝

N	Տեխնիկական միջոցների անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	2	3	4
1	Ավտոկրունկ	10տն և ավել բեռնաբարձությամբ	1
2	Բուլդոզեր	Ցանկացած	1
3	Ինքնաթափ ավտոմեքենա	Ցանկացած	3
4	Ավտոցիստերն /ջրի/	Ցանկացած	1
5	Էքսկավատոր Մինչև 1մ/3	Ցանկացած	1
6	Ասֆալտատեղադրիչ	Ցանկացած	1
7	Ավտոգրեյդեր	Ցանկացած	1
8	Գլխին 5տն-12տն	Հարթ թմբուկավոր	2
9	գլխին 12-20տ	Ցանկացած	1
10	Ավտոգուղրոնատոր	Ցանկացած	1
11	Ասֆալտբետոնի արտադրության գործարան	Ցանկացած	1
12			
13	Կոմպրեսատոր	Ցանկացած	1

Չափաբաժին 8-ի համար՝

N	Տեխնիկական միջոցների անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	2	3	4
1	Ավտոկրունկ	10տն և ավել բեռնաբարձությամբ	1
2	Բուլդոզեր	Ցանկացած	1
3	Ինքնաթափ ավտոմեքենա	Ցանկացած	2
4	Ավտոցիստերն /ջրի/	Ցանկացած	1
5	Էքսկավատոր Մինչև 1մ/3	Ցանկացած	1
6	Էլեկտրոհորատիչ	Ցանկացած	1
7	Ապառապուկիչ մուրճ	Ցանկացած	3
8	Կոմպրեսատոր	Ցանկացած	1
9	գլխին 5-10տ	Ցանկացած	1
10	Բետոնախառնիչ	Ցանկացած	1

Չափաբաժին 9-ի համար՝

N	Տեխնիկական միջոցների անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	2	3	4
1	Ավտոկոունկ	Ցանկացած	1
2	Բուլդոզեր	Ցանկացած	1
3	Ինքնաթափ ավտոմեքենա	Ցանկացած	2
4	Ավտոցիստերն /ջրի/	Ցանկացած	1
5	Էքսկավատոր Մինչև 1մ/3	Ցանկացած	1
6	Պնեվմոզլղոն 16-20 տ	Ցանկացած	1
7	Ավտոգրեյդեր	Ցանկացած	1

Չափաբաժին 10-ի համար՝

N	Տեխնիկական միջոցների անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	2	3	4
1	Ավտոկոունկ	10տն և ավել բեռնաբարձությամբ	1
2	Բուլդոզեր	Ցանկացած	1
3	Էքսկավատոր Մինչև 1մ/3	Ցանկացած	1
4	Ասֆալտատեղադրիչ	Ցանկացած	1
5	Ավտոգրեյդեր	Ցանկացած	1
6	Գլղոն 5տն-12տն	Հարթ թմբուկավոր	2
7	Պնեվմոզլղոն 16-20 տ	Ցանկացած	1

Չափաբաժին 11-ի համար՝

N	Տեխնիկական միջոցների անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	2	3	4
1	Ինքնաթափ ավտոմեքենա	Ցանկացած	3
2	Ավտոցիստերն /ջրի/	Ցանկացած	1
3	Էքսկավատոր Մինչև 1մ/3	Ցանկացած	1
4	Կոմպրեսատոր	Ցանկացած	1

Չափաբաժին 12-ի համար՝

N	Տեխնիկական միջոցների անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	2	3	4
1	Ավտոկոունկ	10տն և ավել բեռնաբարձությամբ	1
2	Բուլդոզեր	Ցանկացած	1
3	Ինքնաթափ ավտոմեքենա	Ցանկացած	3
4	Ավտոնցիստերն /ջրի/	Ցանկացած	1
5	Էքսկավատոր Մինչև 1մ/3	Ցանկացած	1
6	Ասֆալտատեղադրիչ	Ցանկացած	1
7	Ավտոգրեյդեր	Ցանկացած	1
8	Գլդոն 5տն-12տն	Հարթ թմբուկավոր	2
9	Պնեվմոգլդոն 12-20տ	Ցանկացած	1
10	Ավտոգուդրոնատոր	Ցանկացած	1
11	Կոմպրեսատոր	Ցանկացած	1

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.3) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.4) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Աշխատանքային ռեսուրսներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը՝ որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են՝

Չափաբաժիններ 1-12-ի համար՝

N	Որակավորումը	Մասնագիտական փորձը			
		Գործունեության ոլորտը	Կատարած աշխատանքը	Նվազագույն մասնագիտական փորձը	Քանակը
1	2	3	4	5	6
1	Ճարտարագետ-շինարար	տրանսպորտային շինարարություն	ճանապարհների կառուցման կամ հիմնանորոգման աշխատանքներ	3 տարի	2 մարդ

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ էլեկտրոնային եղանակով պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում և Համակարգում՝ հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած Մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում և Համակարգում:

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում և Համակարգում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում Մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:

4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Համակարգի միջոցով Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա Մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ Բաց ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.1.1 Մասնակիցն առաջին անգամ Համակարգ մուտք գործելիս՝ տրամադրված գաղտնաբառը պարտադիր փոխարինում են նոր գաղտնաբառով, ընդ որում, գաղտնաբառը պետք է բաղկացած լինի առնվազն 8 նիշից, այդ թվում՝ 8 նիշում առնվազն մեկ տառից և մեկ թվանշանից: Կենտրոնը պատասխանատվություն չի կրում համակարգում Մասնակիցների անունից չարտոնված գործողությունների (անգործության) համար:

4.1.2 Համակարգում որպես Մասնակից գրանցվելու նպատակով Մասնակիցը մուտք է գործում www.armeps.am կայք և լրացնում համապատասխան պահանջվող տեղեկատվությունը, որից հետո գրանցումը

հաստատելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ստացված գործարքի թիվը մուտքագրում է իր էջում և կենտրոնին տրամադրում է (առձեռն կամ փոստով) հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտարարություն Համակարգում գրանցվելու ցանկություն ունենալու և դրանից բխող քաղաքացիաիրավական պարտավորությունները և պատասխանատվությունն ընդունելու վերաբերյալ (Հավելված N Ա): Հայտարարության տեքստը տեղադրված է www.armeps.am կայքում, իսկ թղթային տարբերակը կենտրոնը տրամադրում է նման պահանջ ստանալու դեպքում՝ անմիջապես:

2) պետական գրանցման վկայականի՝ ներառյալ բոլոր ներդիրների պատճենները՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձ լինելու դեպքում, իսկ Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ լինելու դեպքում՝ իր երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված իրավաբանական անձի գրանցման համապատասխան փաստաթղթի պատճենը, եթե այն կազմված է անգլերենով կամ ռուսերենով: Գրանցման փաստաթուղթն այլ լեզվով կազմված լինելու դեպքում ներկայացվում է նոտարական կարգով վավերացված թարգմանությունը՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով:

3) անձնագրի պատճենը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու դեպքում, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսանալու դեպքում՝ անձը հավաստող փաստաթղթի պատճենը, եթե այն կազմված է անգլերենով կամ ռուսերենով: Անձը հավաստող փաստաթուղթն այլ լեզվով կազմված լինելու դեպքում ներկայացվում է նոտարական կարգով վավերացված թարգմանությունը՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով:

4.1.3 Սույն հրավերի 4.1.2-րդ կետով սահմանված փաստաթղթերն ստալանու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում կենտրոնը հաստատում է Մասնակցի գրանցումը Համակարգում:

4.1.4 Համակարգում Մասնակիցներին գրանցելուց հետո Համակարգն էլեկտրոնային եղանակով յուրաքանչյուրին տեղեկացնում է իր անձը համակարգում հաստատող գործարքի թվի մասին: Գրանցված Մասնակիցները 30 օրացուցային օրվա ընթացքում պետք է մուտք գործեն Համակարգ և մուտքագրեն էլեկտրոնային ուղերձ-նամակով ստացված գործարքի թիվը, հակառակ դեպքում Համակարգում վերջիններիս գրանցումը կհամարվի անվավեր և կպահանջվի նոր գրանցում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Համակարգով ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում և Համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 41-րդ օրվա ժամը 16:00-ն²: Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ Անդրանիկ Մովսեսյանը: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում Համակարգի կողմից:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություններ՝ Օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

դ. հայտի ապահովում,

ե. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը:

զ. գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության կամ ենթակապալի միջոցով:

է. համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

5. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

6. ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

²Հայրը ներկայացնելիս առաջնորդվել www.armeps.am կայքի (կայքի վերևի ծախս անկյունում) տեղադրված ժամացույցով և ուշադրություն դարձնել www.armeps.am կայքում սահմանված՝ «Ժամանակի սահմանափակում հայտերի ստացման կամ մասնակցության հայտերի համար» մասով սահմանված վերջնաժամկետին:

6.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

Հայտի ապահովումը ներկայացվում է Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 9 հավելվածով:

6.2 Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է Մասնակիցը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ գրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

6.3 Հայտի ապահովման գործողության ժամկետը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի հրապարակման օրվանից հաշված 41-րդ օրվա ժամը 16:00-ին Համակարգի միջոցով: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնի դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

